

361
S-30



361
S-30

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

I-ին ԵԽ II-րդ ՏԱՐԻ

1915 ԽՆ 1916 թ. թ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԿՕՆ ՕՄԻԱ» Մեծ ՎԱՆՔԻ ՓՈՂՈՑ № 3:
1917

361
S-30

1 MAR 2010

697

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1007
32487

I-ին ԵՒ Ա-րդ ՏԱՐԻ

1915 bL 1916 p. p.

P H B L P U



ՏՊԱՐԱՆ ՀԵԿՈՒՄԻԱՅ ՄԵՋ ՎԱՆՔԻ ՓՈՂՈՑ № 3.

1917



| Հնկերութեան ժագումը

Ինչպէս յայտնի է, 1905 թ. փետրվարին, հայ-թիւրքական ընդհարումների առիթով, Թիֆլիսում կազմվեց Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողով՝ օգնելու համար այդ ընդհարումներից վնասվածներին։ Այդ Յանձնաժողովը հստատվեց հանգուցեալ Խրիմեան Կաթողիկոսի Հայրապետական կօնդակով 1905 թ. փետրվ. 14-ին։ Ամբողջ հինգ և կէս տարի գործեց Նպաստամատոյց Յանձնաժողովը և, հայ ժողովրդի ընդհանուր համալրութիւնը վայելելով, կարողացաւ հանդանակել մօտ կէս միլիօն ըուբլի, որով բազմատեսակ օգնութիւն հասցրեց աղետաւոր գիւղացիութեանը։ Աւարտելով իր բեղմնաւոր գործունէութիւնը, Յանձնաժողովը 1910 թ. յունիսին, ի դէմս իր նախագահ հանգուցեալ տուաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի և անդամներ հանգուցեալ Ալ. Քալանթարի և պ. պ. Հ. Առաքելեանի, բժշկ. Կ. Ստեփանեանի, Ալ. Խատիսեանի և Ալ. Մելիք Ազարեանի, դիմեց Ամենայոց Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, ներկայացնելով իր գործունէութեան տեղեկադիրը և մանրամասն հաշիւները բոլոր փաստաթղթերով հանդերձ և յայտնեց, որ որոշել է հիմնել օրինաւոր կանոնադրութեամբ մի մշտական Նպաստամատոյց Ընկերութիւն, որի նպատակը լինի օգնել Կովկասի հայ ազգաբնակութեանը ժողովրդական աղէտների ժամանակ, ներկայացնելով միենոյն ժամանակ նախագծված Ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը։ Եւ որովհետեւ հաշիւների փակման ժամանակ 1910

յունիսի 1-ին միացել էր առձեռն պատրաստ դրամ 75187 թ. 43 կ., ուստի այդ զբամբ արվեց ի պահ և շահեցում թիֆլիսի Առևտրական Բանկի մէջ՝ մինչև վերոյիշեալ Ընկերութեան հաստատութիւնը:

Սակայն, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Մատթեոս II Եղիշելեան և Նրա մահից յետոյ ևս ներկայ Վեհափառ Կաթողիկոս Գէորգ Վ պահանջեցին, որ Յանձնաժողովը, իբրև հաստատված Կաթողիկոսից, աւարտելով եր գործունէութիւնը, յանձնէ Նորին Վեհափառութեանը նաև միացած գումարը: Այդ առիթով 1913 թ. գեկտ. 1-ի, թիֆլիսում կայացաւ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի նախագահութեամբ Յանձնաժողովի նիստը, որին ճրաւիրված էին և մի քանի յայտնի իրաւագէտներ, որոնց կարծիքները լսելուց յետոյ, Յանձնաժողովը որոշեց. «Ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին միացորդ գումարը պայմանով, որպէսզի նորին Սրբութիւնը յանձնէ այն առանձին կօնդակով էջմիածնի Սինօդին ի պահեստ և ի գործադրութիւն բացառապէս այն նպատակի վրա, որի համար և հանդանակված է գումարը, այսինքն՝ օգնութիւն ցոյց տալու հայ ազգաբնակութեանը աղէտների ժամանակ կովկասի շրջանում»: Այդ որոշման համաձայն, Յանձնաժողովը 1914 թ. յունվ. 11-ին, հանելով Առևտրական Բանկից եղած գումարը, որ $\frac{0}{0}/0$ -ներով դարձել էր 80,000 թ. և, գնելով 94,600 ըուբլու պետական օբլիգացիաներ նօմինալ արժողութեամբ, ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց կարգադրել, որ այդ գումարը պահի իբրև անձեռնմխելի և միայն Նրա սոկոսիքը արվի ամեն տարի հայ-թիւրքական ընդհանուր մասաւագած հայ գիւղերի ծխական դպրոցներին նպաստ, և Հայրապետական կօնդակով օրհնեց Յանձնաժողովի գործունէութիւնը:

Թէկ նոր Ընկերութիւնը թիֆլիսի նահանգապետից հաստատված էր գեռ 1912 թ. յուլ. 22-ին, սակայն Ընկերութիւնը իր կանոնաւոր գործունէութիւնը սկսեց 1915 թ. յունվարի 1-ից, 1914 թ. գեկտ. 28-ի կայտած անդրանիկ հիմաղիք ժողովից յետով, որի արձանագրութիւնը առաջ է բերվում ստորև:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՅ ՆՊԱՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կիրակի, գեկտեմբերի 28-ին, 1914 թ. ցեր. ժ. 12-ին, Գրական-Գեղագիտական Սալօնի գանձիմում կայացաւ նորահաստատ Հայ Նպատամատոյց Ընկերութեան անդրանիկ ժողովը:

Ժողովը բացվեց 45 նորու ներկայութեամբ: Ժողովին սամսնակցում էին նաև Բագուի Մարդասիրական Ընկերութեան և զաղթականներին օգնող յանձնաժողովի նախագահ Հայկ Տէր-Միքայէլեանը, ինչպէս և նոյն զաղթականներին օգնող յանձնախմբի ներկայացուցիչ Երուանդ Թաղիանոսեանը:

Հ. Առաքելեանը, բանալով նիստը, դեկուցեց հետևեալը.

«Տիկնայք և պարոնայք! Զեզ լաւ յայտնի է, որ 1905 թ. սկզբին, երբ ծագեցին հայ-թիւրքական ընդհարումները, թիֆլիսի հայ հասարակութիւնը, ժողով գումարելով հայոց առաջնորդարանում, ընտրեց Նպատամատոյց Յանձնաժողովը, որին պաշտոն յանձնեց փախստական-ներին և ընդհարումներից վեասկած հայ ազգաբնակութեանը օգնութիւն հասցնել և խնամել: Եւ որովհետեւ այդ ժամանակ Գօլիցինեան ըէմիմ էր և անհնարին էր ստանալ կառավարութիւնից թոյլտութիւն մի ընկերութեան հաստատութեան համար, ուստի Յանձնաժողովը գործեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանաւորութեան ներքոյ և նրանից ստացաւ իր հաստատութեան կոնդակը:

«Զեզ յայտնի է նոյնպէս, որ այդ Յանձնաժողովը գործեց մօտ 6 տարի, 1905—1910 թ. ժամանակամիջոցում, գործեց ամենամեծ եռանդով և արդիւնաւոր թեսում, կարողացաւ, մօտ կէս միլիոն բուբլի հանգանակելով, օգնել աղէտեալներին, գլխաւորապէս զիւղացի ազգաբնակութեան, վերաշնելով աւերեալ աներ, գիւղական տնտեսութիւններ, մատակարարելով նրանց բժրշկական, երկրագործական, զբամական օգնութիւն։ Եւ երբ դադարեցրեց իր գործունէութիւնը, նա իր գրամարկում ունէր 75000 բուբլուց աւելի խնայված գումար, որ յետոյ գարձաւ 94,600 բուբլի։

«Երբ Յանձնաժողովը դադարեցրեց իր գործունէութիւնը, նախ՝ որովհետեւ որ այլն կարիք չը կար, երկրորդ՝ որովհետեւ կառավարութիւնը չէր ճանաչում նրան պաշտօնապէս, քանի որ նա չունէր պատշաճաւոր իշխանութիւնից հաստատված կանոնադրութիւն, միաժամանակ Յանձնաժողովի կազմից մնացած 5 անդամների մէջ (Ա. Մելիք-Ազարեան, Ա. Խատիսեան, բժ. Կ. Ստեփանեան, Հ. Առաքելեան և Ա. Քալանթար) միտք ծագեց վերածել Յանձնաժողովը մի մշտական «Հայ Նպաստամատայց Ընկերութեան», որի նպատակը լինէր բացառապէս օգնութիւն հասցնել և ովկասի և կովկասում ապաստանած հայ աղքաբնակութեանը՝ ժողովրդական աղէտների ժամանակ։ Կանոնադրութեան ծրագիրը, որ խմբագրվեց գլխաւորապէս հանգուցեալ Ալ. Քալանթարի ձեռքով, հաւանութիւն գտաւ նաև հանգուցեալ Մատթէոս Բ. Իզմիրլեան Կաթողիկոսի կողմից և հաստատվեց 1912 թւին, ուստիայն նոյն Ընկերութիւնը մի քանի պատճառներով չսկսեց և յետաձգեց իր գործունէութիւնը և իր մօտ ունեցած գումարը 94600 ր. յանձնեց էջմիածնի Սինոդին այն պայմանով, որ նրա տոկոսիքը գործադրվի հայ-թուրքական ընդհարութերից վաստիած գիւղերի ծխական գտրոցների պահպանութեան վրա, իսկ զրամապլուխը պահվի իբրև Փօնդ ժողովրդական աղէտների գէպքում գործադրելու։

«Եւ ահա այօր, երբ ծագել է ժողովրդական մի ամենամեծ աղէտ՝ գաղթականական խոշոր հոսանք Թիւրքիայից և Պարսկաստանից, անհրաժեշտ է դարձել նպաստամատայց Ընկերութեան գործունէութիւնը, ուստի և

նա կեանքի է կոչվում։ Եւ թէպէտ կան այլ ընկերութիւններ, ժամանակաւոր կօմիտէտներ թէ Թիֆլիսում, թէ այլ քաղաքներում դադթականներին օգնելու համար, սակայն աղէտը այնքան լայնածավալ է և կարիքն այնքան մեծ, որ տասնեալ Ընկերութիւններ անգամ անբաւարար են բոլոր կարիքներին գոհացումն տալու և բոլոր աղէտները գարմանելու։ Մեր նոր Ընկերութիւնը, անշուշտ, բանակցութեան մէջ կը մտնի համանման նպատակ ունեցող հայկական ընկերութիւնների և կօմիտէտների հետ՝ գործողութեան միութիւն և համերաշխութիւն հաստատելու և աշխատանքը բաժանելու համար։

«Յայտարարելով ժողովը բացված, քանի որ կանոնադրութեամբ պահանջված անդամների թիւը կայ, առաջարկում եմ ընտրել նախագահ և քարտուղար ու անցնել օրակարգին»։

Ժողովը միաձայն նախագահ ընտրեց Հ. Առաքելեանին և քարտուղար Գ. Մելոյեանին։

Նախագահը կարգաց նոր Ընկերութեան կանոնադրութեան էական կէտերը, որոնք են։

1) Ընկերութեան նպատակն է՝ օգնութիւն հասցնել հայ ժողովրդին անբերբիութեան, վարակիչ հիւանդութիւնների տարածման, հեղեղների, մեծ հրդեհների և զանազան ժողովրդական աղէտների դէպքերում՝ կովկասի շրջանում։

2) Իր նպատակին հասնելու համար Ընկերը կազմակերպում է օգնող մասնաժողովներ, բժշկական խմբեր, մթերքների պահեստներ և նուան հիմնարկութիւններ, խընդրելով օրէնքի պահանջած դէպքում համապատասխան թոյլաւութիւն։

3) Ընկերութիւնը բաղկացած է երկու սեռի անդամներից անսահման թւով ա) պատւաւոր, բ) աջակից և գ) իսկական (վերջիններս վճարում են տարեկան 3 րուբլի)։

4) Վարչութիւնը բաղկացած է Ընկերութեան նախագահից, 6 անդամից և 4 փոխանդամից, որոնք ընտրվում են 3 տարի ժամանակամիջոցով։

5) Ընկերութիւնը բաց է անում ճիւղեր և գաւառներում։

Ապա նախադանն առաջարկեց իրեւ օրակարգի իրն
դիբներ. 1) որոշել Ընկերութեան առաջիկայ գործունէու-
թեան ծրագիրը 2) ընտրել վարչութիւն և սալ նրան
հրահանգ՝ գործելու արդ ծրագրի համաձայն:

Բոլոր ժողովականները, ի թիւս որոց և Բագուից
եկածները, համակրութեամբ ողջունեցին նոր Ըսկերու-
թեան ծնունդը, համարելով նրա զոյտթիւնն անհրաժեշտ
և կարեոր:

Նախագահ Հ. Առաքելեան առաջարկում է ժողովը՝ սրբակալ թէ ժողովը պէտք է այժմ, գաղթականներին օգնելու հարցից գուրս, ուրիշ հարցերով ևս զբաղվէ:

Ստ. Մայնասեան.—Այսօր անհրաժեշտ է միայն ընտրել վարչութիւն և անմիջապէս գործի դիմել, քանի որ հարցը հրատապ է և անյետածգելի:

Յ. Սպինդիարեան.—Ողջունելով նոր Ընկերութեան հաստատութիւնը, պարագ եմ համարում յայտնել, որ Նպաստամատոյց Ընկ, աջողութիւն կունենայ այն գէպքում, եթե հասարակութիւնը իշխառատ նուէրները հանդէս բերէ: Պէտք է աշխատ՝ որ նոր Ընկերութիւնը մըցութեան մէջ չը մտնի գոյսութիւն ունեցող համանման ընկերութիւնների հետ, օրինակ՝ Կ. Հ. Բ. Ընկերութեան հետ, որի կանոնագրութիւնը նոյնպէս աղէտեալներին օգնելու կէտեր է պարունակում:

Յ. Ղորղանեան.—Մենք այսօր հաւաքված ենք ոչ
թէ տեսական խնդիրներ լուսաբանելու, այլ անմիջապէս
գործի անցնելու, ուստի և անհրաժեշտ է անցնել վարչու-
թեան ընտրութեան, առանց հաշվի առնելու այլ ընկերու-
թիւնների հետ ոչ ցանկալի մրցութեան հարցը, որովհե-
տև ներկայ ճշնաժամին հազիւ թէ բացասական մրցու-
թեան մէջ մտնեն գոյութիւն ունեցող միւս ընկերու-
թիւնները։ Մենք կընտրենք վարչութիւն և կը յանձնա-
բարենք նրան՝ նախորդ նպաստամատոյց Յանձնաժողովից
մնացած գումարի մասին ստոյդ զեկուցումն տալ յե-
տագայ ժողովին։

Բժիշկ Ա. Արծրունի. — Յանկալի է ստեղծել մի կենաց բանական մաքմին, որ անմիջապէս օգնութիւն ցոյց տայ դադիւնականներին. Ուրիշ ընկերութիւններ ծանրաբեռնված

են այլ հոգսերով և իրանց ոյժերի միայն մի մասը կարող են նույիրել, մինչ նպաստամատոյց Ընկերութիւնը կարող է բացառապէս նույիրվել այդ գործին և համախմբել իր շուրջը նաև միւս ընկերութիւնները։ Հենց այս տեսակէտից էլ կարեոր է Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջնորդութեան և աջակցութեան դիմել։

Յ. Տէ՛ր-Դրիզորեան.—Նպաստամատոյց Ընկերութիւնը
կարող է գործել միայն այն դէպքում, եթե մի խոշոր
գումար լինի նրա տրամադրութեան ներքոյ, հակառակ
դէպքում նա ոչինչ անել չէ կարող: Ինչպէս լավում է,
գաղթականների համար Թիֆլիսի քաղաքագլխի մօտ բա-
ւական մեծ գումար կայ. արդեօք չի կարելի դիմել և
խնդրել, որ մասն և բաժին հանվի նրանից հայ կարօտ-
եայներին ևս:

Ս. Կանայեան.—Եղած առարկութիւնները որքան և
ընդունելի լինեն, այնուամենայնիւ չեն խանգարում, որ
մի նոր մարմին ևս ստեղծվի մեր շուրջը տիրող ծով
կարիքի դիմաց։ Հետո աշխատանքի բաժանման տեսակէ-
տից կարենոր են շատ մարմիններ։

Քր. Վարդանեան. — Իւրաքանչիւր ընկերութիւն իր շուրջը կարող է խմբել այլ ընկերութիւններ միայն իր հսկամիտ և եռանդուն գործունէութեամբ։ Այսօր կարիքն է մեզ ստիպում նոր ընկերութիւն կազմել, ապա ուրեմն միւս մարմինները արգելք չեն հանդիսանայ նպաստամատոյց ընկերութեան։

Ա. Աթանասեան.—Այստեղ խօսք եղաւ ալ. Խատիսեանի մօտ գտնված մեծ գումարի մասին։ Պէտք է յայտնեմ, որ Խուսաստանի Քաղաքների Միութեան փոխադրած գումարն է այդ, որ և ծախսվելու է համաձայն այդ Միութեան ցուցումներն։ Նպաստ. Ընկերութեան հրապարակ գալը միանգամայն կարևոր է և այժմէական։

Հ. Համբարձումեան. — Գոյսովիւն ունեցող ընկերութիւնները չեն խանդարի, որ կազմվի Նպաստամատոյց Ընկերութիւն՝ ներկայիս ծով կարիքի դիմաց:

Պ. Աթանասիան. -- Քանի որ նախկին Նպաստամա-
տոյց Յանձնաժողովը իր անցեալ գործունէութեամբ յայտ-
նի է դարձել հասարակութեանը և ձեռք բերել որոշ փոր-

ձառութիւն, ապա ուրեմն նա կարող է իր առաջիկայ գործունէութիւնը արդինաւէտ զարձնել և իր շուրջը խմբել միւս ընկերութիւնները:

Եր. Թաղիանուսեան. — Կենտրոնական ընկերութիւն ստեղծելու մասին խօսելը և նման տենդեց ցոյց տալը այժմ անտեղի է և վաղաժամ: Ապագայում գործն ինքը կը մատնանշէ Ընկերութեան բնոթը: Անկախ իր զրաւելիք դիրքից, Նպաստամատոյց Ընկերութեան հրապարակ գալը խիստ կարեոր է և այժմէական, որովհետեւ հայ ժողովրդի կրած աղէար բազմազան է ու սոսկալի: և ողջունում եմ նրա ծնունդը: Որքան էլ կամենանք այժմեանից կենտրոնական մարմնի ընոյթ տալ նրան և կենդրոնացնել գործերը, չենք կարող, որովհետեւ Ընկերութեան լիազօրները անխուսափելիօրէն պէտք է գործ ունենան տեղական մարմինների հետ, որոնք և լայն չափով աջակցութիւն են ցոյց տալու նրանց գործունէութեանը: Նպաստամատոյցի լիազօրները պէտք է գործեն տեղական մարմինների հետ համերաշխ ու ձեռք ձեռքի տուած:

Յ. Սպինդիարեան. — Երբ ես փոքր ինչ առաջ շեշտիցի, թէ մի գուցէ այս Ընկերութիւնը առաջ բերէ ոչ ցանկալի որցութիւն միւս Ընկերութիւնների կողմից, ի նկատի ունէի այն հանգամանքը, որ իւրաքանչիւր Ընկերութեան լիազօրներն աշխատում են՝ լայն աշխատանքը դրաւել յօդուա իրանց Ընկերութեան և գործել այդ ուղղութեամբ: Դրա համար էլ այս նորակազմ Ընկերութիւնը պէտք է բանակցութեան մէջ ունէ գոյութիւն ունեցող միւս Ընկերութիւնների հետ, որպէսզի ոչ ցանկալի շփումներ առաջ չը գան: Նպաստամատոյցի փառաւոր գործունէութեան ժամանակ լայն չափով գաւառն է հանդէս եկել իր աջակցութեամբ: Այժմ ևս պէտք է գաւառական մարմիններին արժէք ու նշանակութիւն տալ և նրանց աջակցութեանը դիմել: Եղունում եմ նոր Ընկերութեան հանդէս գալը և անկեղծօրէն ցանկանում եմ աջողութիւն:

Հ. Տէր-Միքայէլիան. — Ես Բագուից Թիֆլիս եմ եկել յատկալէս գաղթականներին վերաբերեալ գործը կանոնաւորելու և տեղական մարմինների հետ խորհրդակցելու

գործողութեան որոշ և համերաշխ սիստեմ մտցնելու համար: Բագւում կայ գաղթականներին օգնող ընկերութիւն, որ և իր գործը կատարում է, բայց նա անկարող է միայնակ բաւարարութիւն տալ ծովացած կարիքին. աւելին կասեմ. մեր գործունէութեանը լայն չափով օգնութեան է հասնելու նաև ոռուսաց հասարակական կարծիքը: Ընտրվելիք նոր վարչութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնէ՝ իր գործունէութիւնը յարմարեցնելու միւս ընկերութիւնների գործունէութեան: Ներկայումս աղէտն այն աստիճան ցնցող է, որ նրա առաջ պէտք է չքանան անձնական մանր հաշիւները և խծրծանքները: Ցանկալի է, որ բոլոր ընկերութիւնները ձեռք ձեռքի տուած ստեղծեն մի համերաշխ գործունէութիւն:

Նախ զայա՞ն. Առաքելիսան, ամփոփելով վիճաբանութիւնները, շեշտեց, որ, յիրաւի, ինչպէս մատնանշեցին պ. պ. Երւանդ Թաղիանոսեանը և Հայկ Տէր-Միքայէլեանը, այս Ընկերութիւնը միայնակ անկարող կը լինի շօշափելի սրդինք ցոյց տալ. նոր Ընկերութիւնը բնուած չէ ձգտում հնարոնական մարմին հանդիսանալ. բացի գրանից՝ նա շամանակաւոր մարմին չէ, այլ մնայուն, և կոչված է օգնութիւն ցոյց տալ հայ ժողովրդին, ժողովրդական աղէտների ժամանակ: Նա կը գործէ իրեկ կրտսեր ընկերութիւն իր անդրանիկ եղբայր միւս ընկերութիւնների հետ: Եւ որպէսզի հնարաւոր լինի նախ և առաջ գործի դիմել, անհրաժեշտ է անմիջապէս դիմել վարչութեան ընտրութեան, որին և յանձնել մշակելու գործունէութեան ծրագիր, բանակցելու Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ՝ 94,600 ը. վերազարձնելու մասին, նաև բանակցելու միւս ընկերութիւնների հետ և նետիւանքը գեկուցանել ընդհանուր ժողովին: Եւ ի նկատի ունենալով, որ Նպաստամատոյց Ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը հաւանութիւն է գտել գեռ հանգուցեալ Մատթէոս Բ.-ըրդ կաթողիկոսի կողմից, ցանկալի է Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Վի հովանաւորութիւնը խնդրել:

Ժողովը, հաւանութիւն տալով այս առաջարկին, որոշ շեց զիսել վարչութեան ընտրութեան: Ընկերութեան նախագահ ընտրվեց միաձայն պ. Ալեքսանդր Մելիք-Ազարեան:

Վարչութեան անդամներ և փոխանդամներ ընտրվեցին՝ 35 քուէարկողների մասնակցութեամբ՝ հետևեալ անձինք՝

1) Հ. Առաքելեան, — 31 ձայն, 2) Յ. Սպենդիարեան՝ 32 ձայն, 3) Ա. Աթանասեան՝ 29 ձայն, 4) բժիշկ Վ. Արծրունի՝ 26 ձայն, 5) տիկ. Հ. Մարտիրոսեան՝ 27 ձայն, 6) Ստ. Կանայեան՝ 25 ձայն, 7) բժիշկ Կ. Ստեփանեան՝ 25 ձայն, 8) տիկ. Իւլ. Սպենդիարեան՝ 23 ձայն, 9) Գր. Վարդանեան՝ 22 ձայն, 10) Սամս. Զերքզեան՝ 22 ձայն.

Որովհետև բժիշկ Կ. Ստեփանեան և Ստ. Կանայեան հաւասար թւով ձայներ էին ստացել, նրանց մէջ վիճակ ձգվեց և վիճակն ընկաւ Ա. Կանայեանին, ուստի ուրոշվեց առաջին համարել Վարչութեան անդամ, իսկ վերջին 4-ին՝ փոխանդամ։ Սակայն, ի նկատի ունենալով, որ Ընկերութեան առաջ մեծ գործունէութիւն կայ դըրքած, որոշվեց փոխանդամներին ևս հրաւիրել Վարչութեան նիստերին ձայնի իրաւունքով։

Յերեկվայ ժամը 4-ին նախագահը, շնորհակալութիւն յայտնելով, փակեց ժողովը։

Ժանօն։ — Ա. Մելիք-Ազարեան յարդելի պատճառներով հրաբուժ նախագահի պաշտօնից։ Ընկերութեան անդամների երկանակագահը լուրջանուր ժողովը, կայացած յունվարի 11-ին, միաձայն նախագահ լուրեց Դաւիթ-իսան Աւան-իւղաշեանին, որ տուեց իր համաձայնութիւնը,

II Ընկերութեան վարչական կազմը 1915|6 թ. թ.

Վարչութիւնը իր անդրանիկ նիստը ունեցաւ Գրական-Գեղագիտական Սալօնում 1915 թ. յունվարի 2-ին, ներկայութեամբ տ. տ. Հ. Մարտիրոսեանի և Իւլիա Սպենդիարեանի, պ. պ. Հ. Առաքելեանի, բժ. Վ. Արծրունու, Ա. Աթանասեանի, Ստ. Կանայեանի և Գր. Վարդանեանի։ Այս նիստում ընտրվեցին փոխանախագահ՝ Հ. Առաքելեան և գանձապահ՝ տ. Սպենդիարեան։

1915 թ. ընթացքում Վարչութեան կազմի մէջ եղան հետեւեալ փոփոխութիւնները. ապրիլ և մայիս ամսում հրաժարվեցին անդամութիւնից պ. պ. Յ. Սպենդիարեան, բժ. Վ. Արծրունի և Ա. Զերքզեան, իսկ օգոստ. 11-ին կայացած ընդհանուր ժողովում ընտրվեցին Վարչութեան նոր անդամներ՝ պ. պ. Աւ. Եղեկեան, Ստ. Մալխասեան, Մ. Արամեան և Ա. Միլեան. վերջինս սակայն շուտով հրաժարվեց։

1915 թ. ընթացքում Վարչութիւնը ունեցաւ ընդհանումը 28 նիստ, որոնց անդամները յս ձախել են

Դ. Խ. Աւան-Խոզբաշեան	11	անդամ
Հ. Առաքելեան	28	»
Ստ. Կանայեան	17	»
Ա. Աթանասեան	18	»
Գր. Վարդանեան	19	»
Բժ. Վ. Արծրունի	9	»

Մտ. Մալխասեան	6	անդամ
Աւ. Եղեկեան	6	»
Մ. Արամեան	6	»
տ. Իւ. Սպէնդիար'յան	23	»
տ. Հ. Մարտիրոսեան	24	»

Վարչութեան քարտուղարի պաշտօնը 1915 թ. կատարել են՝ սկզբում Ստ. Կանայեան, ապա գործավար Ա. Եսայեան, իսկ վերջում Ստ. Մալխասեան. յուրիսի վերջին տ. Սպէնդիարեան հրաժարվեց դանձապահի պաշտօնից:

Վարչութեան նիստերը, մինչև սեփական գրասենեակ վարձելը, տեղի էին ունենում նախագահ պ. Դ. Խ. Իւզբաշեանի բնակարանում և երբեմն «Մշակի» խմբագրատանը, Բակերութեան համար սեփական գրասենեակ ժամանակաւորապէս վարձվեց յունիս ամսում Սօլօմօնովուկայա փող. № 21 տ. Ս. Հէջութեանի տանը:

1916 թ. ընթացքում Վարչութիւնը ունեցել է 30 նիստ, որոնց մասնակցել են.

Դ. Խան Աւան-Իւզբաշեան	12	անդամ
Հ. Առաքելեան	22	»
Ստ. Մալխասեան	14	»
Աւ. Եղեկեան	25	»
Մ. Արամեան	22	»
Տտ. Կանայեան	20	»
տ. Հ. Մարտիրոսեան	18	»
տ. Իւ. Սպէնդիարեան	17	»
Ա. Աթանասեան	11	»
Գր. Վարդանեան	3	»
Մալխասեանի բացակայութեան ժամանակ նրան փոխարինող Ա. Նազարեթեան (իրք արհեա- տանոցների մասնաժ. անդամ)	11	»

Վարդանեան և Աթանասեան քաղաքից երկար ժամանակ բացակայ են եղել, նացակայ է եղել նոյնույն Ստ. Մալխասեան, որ լիազօրի պաշտօնով Վահ էր գնացել, իսկ կարճ ժամանակով բացակայել են Հ. Առաքելեան և տ. Իւ. Սպէնդիար: Գանձապահի պաշտօնը կատարել է Ա. Արամեան, իսկ քարտուղարի պաշտօնակատար եղել է Ս. Եսայեան, որ և գործավար ու հաշուապահ:

Կ Ո Չ

ՀԱՅ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

III ՀԱԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒԱԿՈՒԹԻՒՆԻ

Հանդէս գալով հայութեան գլխին պայթած սոսկա-
լի աղէտի օրերում, երբ պատերազմի պատճառով հա-
յաստանը աւերգում և տաշու ու վրա էր լինում, իսկ
թիւրքական սրից ու հրից ճողովրած տարաբաղդ հայ
ժողովրդի բեկորները ապաս ան էին որոնում իրանց
կովկասաբնակ եղբայրների մօտ, նպաստամատոյց Ընկե-
րութիւնը, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ
դէպի արդ սոսկալի աղէտը՝ և իր ամենաառաջին հոգու չը
շինել հայ փախստականներին օգնելու գործը։ Այդ նկա-
տումով Վարչութիւնը իր առաջին իսկ նիստում որոշեց՝
նուիրել նպաստամատոյցի գործունէութիւնն առ այժմ
բացառապէս թիւրքահայ փախստականների օգնութեանը
և գործել միւս կազմակերպութիւնների հետ համերաշ-
խաբար։ Անմիջապէս տպադրել տալով Ընկերութեան կա-
նոնագրութիւնը հայերէն և սուսերէն, Վարչութիւնը հե-
տամուտ եղաւ ամենից առաջ ձեռք բերել նիւթական
միջոցներ, որի առիթով և մամուլի մէջ տպագրեց հետե-
ւալ կոչը հայերէն և սուսերէն։

3248X

Հայ պատմութեան մէջ, կարելի է ասել, անօ-
րինակ է ներկայ գաղթականական հոսանքը, որ
ծայր տուեց Թիւրքիայից և Պարսկաստանից։

Մեծ է հսկայական և համազգային աղէտը,
բայց և կարող է նա դարմանվել, եթէ միայն մենք
կարողանանք նպաստակայարմար միջոցներ գտնել։

Ամենանպաստակայարմար միջոցը—հարիւր հա-
զարաւոր փախստականներին իրանց հայրենիքը,
օջախը վերադարձնելն է և նպաստելը՝ վերսկսելու
իրանց մայր հողի մշակումը։

Առանց սեփական հողի չը կայ փրկութիւն։

Ուրեմն հնարաւորութիւն, միջոց տանք փախս-
տականներին վերադառնալ իրանց տեղերը, հերկել,
մշակել իրանց հողերը, որպէսզի ազատվեն նախ՝ սո-
վի ուրուականից, երկրորդ՝ իրանց հողերը չը զրաւ-
վեն ուրիշներից։

Իսկ երբ վերադարձի հնարաւորութիւնն եղաւ,
պէտք է փախստականներին հայթայթել լծկան տա-
ւար, սերմացու և ուղարկել երկիր։

Եւ Հայ նպաստամատոյց Ընկերութիւնը, որ
շարունակութիւնն է Կենտ. նպաստամատոյց Յանձ-
նաժողովի, որ իր գործունէութեան գլխաւոր ա-
ռարկան գարձրել էր հայթիւրքական ընդհարում-
ներից քայքայած գիւղացիական տնտեսութիւն-

ների վերաշինութիւնը, այժմ ևս ստանձնել է փախստականներին օգնելու այդ ճիւղը և սիստեմը, թողնելով խնամատարութեան միւս հոգսերը այլ կազմակերպութիւնների:

Հայ նպաստամատոյց Ընկերութիւնը պատրաստութիւններ պէտք է տեսնէ, որ կարողանայ գարնանը, առաջին իսկ հնարաւորութեամբ, —իսկ այդ հնարաւորութիւնը օրաւուր հեշտանում է, —նորից ետ ուղարկել փախստականներին, գոնէ հողագործ տղամարդկանց, հայթայթելով նրանց լծկան տաւար, սերմացու և վերահաստատելով մայր Հայաստանի քայլայված գիւղացիական տնտեսութիւնը, որ հիմն է ազգային գոյութեան:

Ահա այս ամենակարևոր և կենսական կարիքի և պահանջի համար անհրաժեշտ է, որ հայ հասարակութիւնը, սկսեալ ունեութից մինչև չունեորր, շտապէ ժամ առաջ աջակցել Ընկերութեանս իր առատ և սրտաբուխ նուէրներով, և դրանով հնարաւորութիւն տայ Ընկերութեանս՝ իրազործել այն մեծ միստիան, որ ստանձնել է:

Օգնեցէք մեզ, որով օգնած կը լինէք հայ գիւղացիութեան, ազգային գոյութեան այդ հիմնաքարին:

Եւ պէտք է ասել, որ հայ հասարակութիւնը լայն արձագանը տուեց Վարչութեան կոչին:

Երբ 1914 թ. դեկտ. 28-ին Ընկերութեան անդամների անդրանիկ ժողովում յայտարարվեց Ընկերութիւնը բացված, վերջինս ունէր Ընդամենը 35 անդամի 3-ական բուրլի անդամագմարներ, այսինքն 105 տեսնել դրամական հաշվից, ինչպէս կարելի է մուտք 62,443 ր.—70 կ.:

Առաջին խոշոր նուէրը (10,000 ըուբլի) տուեց Ընկերութեան նախագահ պ. Դաւիթ-Խան Աւան-Իւզբաշեանը, որ և յետագայում յատկապէս յօգուտ որբերի նուիրեց Ընկերութեանը 3000 ր., Բացի դրանից, պ. Իւզբաշեան նուիրեց նպաստամատոյցին կինչի յայտնի, «Հայաստան» («Արմենիա») հրատարակութիւնից 500 հատոր յօգուտ Ընկերութեան վաճառելու:

Ապա Ընկերութեան նիւթական միջոցներին մեծապէս նպաստեցին հայ, և ուստի մանուլի օրգանները, որոնք ստացան և յանձնեցին յօգուտ նպաստամատոյց Ընկերութեան ուղարկված նուէրները: Այդօրինակ խմբագրութիւնների թւում առաջին տեղը պէտք է տալ «Մշակ» օրաթերթի խմբագրութեանը: (Խմբագրութիւնների ստացած նուէրները տեսնել դրամական հաշվի մէջ): «Մշակ» խմբագր., բացի Ընկերութեան համար ստացված դրամական նուէրներից, յանձնեց նպաստամատոյցին նաև Վենետիկի Սխիթարեան վանքի նուիրած «Գեղունիների» մասցած Սխիթարեան վանքի նուիրած «Գեղունիների» մասցած Սխիթարեան արժանիքի է և պ. Տ. Նաօրինակները: Ծնորհակալութեան արժանիքի է և պ. Տ. Նաօրինակները: Ծնորհակալութեան բացման օրը, շնորհաւորելով, վարեան, որ Ընկերութեան բացման օրը, շնորհաւորելով, նուիրեց 10,000 օրինակ «Ղետնդ Երէցը օրհնում է Վարդական Մամիկոնեանի զօրքը» պատկերից՝ յօգուտ նպաստամատոյցի վաճառելու:

Վարչութիւնը 1915 թ. կազմակերպեց, իր միջոցները ուժեղացնելու համար, միօրեայ հանգանակութիւն տուիերով ու զրքերի վաճառումով Թիֆլիսում, համերգ՝ Արքունական թատրոնում սիմֆոնիկ օրկեստրի մասնակցութեամբ, դասախոսութիւն և, վերջապէս, պատկերների ցույցեամբ, դասախոսութիւն ու ցուցահանդէս: Այլև Վարչութիւնը վիճակահանութիւն ու ցուցահանդէս: Այլև Վարչութիւնը նպաստեց «Զիթենի» գրական ժողովածուի հրատարակութեանը, վաճառելով ապա այդ յօգուտ Ընկերութեան:

Ընկերութեան համար ոչ նուազ նպաստաւոր հանգամանք էր և այն, որ Ամենայն Հայոց Վեհափառ Կա-

Թողիկոս Գէորգ Վ իր բարձր հովանաւորութեան տակ
առաւ Նպաստամատոյց Ընկերութիւնը:

Իր գործունէութեան հէնց սկզբից, Վարչութիւնը
խորհրդակցութեան հրաւիրեց փախստականներին օգնող
հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին
և աշխատեց ստեղծել տալ մի ընդհանուր կենտրոնական
մարմին և իրագործել աշխատանքի բաժանման սկզբունքը:

Աւելորդ չէ համարում Վարչութիւնը բերել իր յուն-
վարի Դ-ի (1915 թ.) նիստի արձանագրութիւնը:

Ա. Բ Զ Ա Ն Ա Գ Բ Ո Ւ Խ Թ Ի Կ Ն

Դ յունվարի 1915 ամի, Ժամը 12-ին առաւօտեան,
պ. Տ. Նազարեանի Սալօնում կայացաւ Հ. Նպաստամա-
տոյց Ընկերութեան Վարչութեան բ. նիստը, որին ներ-
կայ էին Թիֆլիսում գոյութիւն ունեցող և փախստա-
կաններին ինսամող մարմինների ներկայացուցիչները,
բացի Կ. Հ. Բ. Ընկերութեան կից կազմված կենտրոնա-
կան կօմիտէի ներկայացուցչից:

Պարսկահայերի մասնաժողովի ներկայացուցիչներն
էին պ. պ. Արգումանեան Խոսրովի Նազարեան Արտաշէս.
Կովկասի հայ օրիորդների Ընկերութեան՝ օր, օր. Ար-
զումանեան Արաքսի և Սուլիսանեան Աշխէն, Կովկասեան
Կօմիտէտի քաղաքային յանձնաժողովի փախստականնե-
րին օգնող մասնաժողովի կողմից՝ տ. Հեղինէ Աւթանդի-
լեան, «Մեղու» Ընկերութեան՝ աթկին Բ. Շահպարոնեան:
Ներկայ էր նաև պ. Գրիգոր Պապեանը իբրև Բագուի հայոց
գաղթականներին օգնող բիւրոյի ներկայացուցիչ: Ընկե-
լեան, Յ. Սպենդիարեան, տ. Իւլիա Սպենդիարեան, Գր.
րոսեան և Ս. Կանայեան:

Հ. Առաքելեանը, բանալով նիստը, յայտնեց, թէ
Նպաստամատոյց Ընկերութիւնը, որ մնայուն հաստա-
նակաւոր կազմակերպութիւնների համաձայն, Ժամա-
լու: Արդէն Թիֆլիսից դուրս և, օրինակ Երկանում, Վե-
հական կազմված մարմինների հետ համերաշխ գործե-

հավառ Հայրապետի հրամանով կազմված է Կեղունական
կօմիտէ: Անհամաժեշտ է ուրեմն, որպէսզի փախստական-
ներին օգնող բոլոր մարմինների միջն հաստատվի մի
ընդհանուր կապ և գործունէութեան միութիւն ու աշխա-
տանքի բաժանում:

Ժողովականներից հետզհետէ խօսեցին պ. պ. Յ.
Սպենդիարեան, Խ. Արգումանեան, Նազարեան, տ. Հ.
Աւթանդիլեան, Ս. Կանայեան, Գր. Վարդանեան, Գր. Պա-
պեան, մատանանշելով գործունէութեան մի ընդհանուր
ծրագրի և օգնութեան կանոնաւոր ու համաչափ կատար-
ման անհրաժեշտութիւնը:

Նախագահը, ամփոփելով բոլոր խօսակցութիւնները,
յայտնեց, թէ որպէսհետեւ այժմ պարզվում է, որ փախս-
տականների կենդրոնավայրը լինելու է Երևանի նահանգը,
որ կառավարութիւնը ինքը աշխատում է տեղաւորել
փախստականներին, իսկ նույրաբերութիւններն այժմ
ուղարկում են գլխաւորապէս Էջմիածին՝ Վեհափառ Հայ-
րապետին, ուստի անհրաժեշտ է և հնարաւոր, որպէսզի
զանազան կազմակերպութիւնների միութիւնը կատարվի
Վեհափառ Հայրապետի հրաւերով, Էջմիածնում, բոլոր
մարմինների ներկայացուցիչներից: Այս միաքը ծագել է
և այլ տեղերում:

Ժողովականները, համաձայնելով այս եզրակացու-
թեան, շեշտեցին այն միտքը, թէ լաւ կը լինի, որ մար-
մինները կազմեն գործունէութեան միութեան մասին
կանխապէս մշակված պատրաստի ծրագիւ, նախ քան
Էջմիածին մեկնելը: Որոշվեց հեռագրով խնդրել Զեմստ-
վային Միութեան ներկայացուցիչ պ. Գրիգոր Եւանգու-
լեանին, որ այժմ գտնվում է Էջմիածնում, Վեհափառ
Կաթողիկոսի առաջ պաշտպանէ Ընկերութեան առաջարկը:
Ահա հեռագրի բովանդակութիւնը.

«Այսօր Հայ Նպաստամատոյց Ընկերութեան Վարչու-
թեան նիստում, մասնակցութեամբ տեղական համանման
կազմակերպութիւնների ներկայացուցիչների, որոշվեց
կազմակերպութիւնների ներկայացուցիչների, որոշվեց
ինդիրել Ամենայն Հ. Վեհ. Հայրապետից՝ գումարել Էջմիած-
նում, իր պատւաւոր նախագահութեամբ ժողով՝ թէ Թիֆ-
լիսում թէ այլ քաղաքներում կազմված վերոյիշեալ բոլոր

ընկերութիւնների և կազմակերպութիւնների ներկայացուցիչներից, նրանց գործունէութիւնը միացնելու հայ փախստականներին օգնելու համար։ Խորհրդակցութիւնը խնդրում է ձեզնի՝ մատուցանել այս միջնորդութիւնը Նորին Վեհափառութեան, ի նկատի առնելով, որ անհրաժեշտ է մշակել գործունէութեան մի ընդհանուր ծրագիր»։

Այսուհետեւ Ընկերութեանս Վարչութիւնը շարունակեց իր նիստը առանձնապէս և կայացրեց հետեւեալ որոշումները։

1) Համաձայն ընդհանուր ժողովի որոշման, դիմել վեհափառ Հայրապետին և խնդրել, որ Ընկերութեանս վերադարձի հայ-թուրքական ընդհարութեանը վնասվածներին օգնելու համար հաստատված նախկին նպաստամատոյց Յանձնաժողովից ի պահ տրված գումարը՝ էջմիածնի սինողից՝ նպաստամատոյց՝ Ընկերութեան առաջիկայ գործունէութեան համար։

2) Վարձել մի բնակարան գրասենեակի և պահեստի համար՝ քաղաքի որևէ յարմար վայրում։

3) Նախագծված «փախստականների օրը» հանգանակութիւն կատարել Թիֆլիսի հետ և կովկասի այլ քաղաքներում։

Ընդառաջելով ըստ ամենայնի համերաշխ գործելու գաղափարին, Վարչութիւնը մեծ համակերութեամբ ողջունեց Վեհափառ Կաթողիկոսի որոշումը՝ կայացնել էջմիածնում բոլոր փախստականամ ընկերութիւնների ներկայացուցիչների համագումար մի կենդրօնական մարմին ստեղծելու համար, և իր ներկայացուցիչներով (Ա. Աթանասեան և Հ. Սուաքելեան), ստանալով նախապէս ընդհանուր ժողովից մանդատներ, մատնակցեց 1915 թ. մարտի 1—3. տեղի ունեցած համագումարին, որը, սակայն, սպասած ցանկալի արդիւնքը չը տուեց, որովհետեւ համագումարին մասնակցող 24 ներկայացուցիչներից 22-ը թէն ընդունեցին կենդրօնական մարմին ստեղծելու գաղափարը, բայց Կ. Բ. Հ. Ընկ. և Հ. Գիւղատնտ. Ըսկ. ներ-

կայացուցիչները վերապահութեամբ ընդունեցին և այդպիսով այդ գաղափարը մնաց չիրագործված գործնականի մէջ։

Նպաստամատոյց Ընկ. Վարչութեան գործունէութիւնը՝ յընթացս 1915 և 1916 թ. թ. արտայայտվել է հետեւեալ ձեռնարկութիւնների մէջ։

1) Կազմակերպել է մի արշաւախուսը, բաղկացած գիւղատնտեսներ Ա. Աթանասեանից, Ա. Պաղաջանեանից և գործակատար Գ. Նիկոլեանից, Ալաշկերտի շրջանի հայ փախստականներին դիւղատնտեսական օգնութիւն ցոյց տալու նպատակով, յատկացնելով դրա համար 20000 բուրլի. սակայն Վարչութիւնից անկախ պատճառներով, արշաւախուսը անկարող եղաւ իր միստիան կատարել. ծախսվեց մօտ 6000 բուրլի գլխաւոր էջմիածնի եղբ. Օգն. Յանձնաժողովի սիջոցով։

2) Կազմակերպել է 2-րդ արշաւախուսը, բաղկացած Վարչութեան անդամներ Հ. Սուաքելեանից, Գր. Վարդանեանից և գործակատարներ Յովսէփեանից, Գ. Նիկոլեանից և Քաջախեանից՝ Մանազկերտ-Վան գնալու և այնտեղ կենտրօնացած հայ փախստականներին օգնութիւն ցոյց տալու համար, բանալով օրինակ ճաշարան, հիւանդանոց ու արհեստանոց։ Արշաւախուսըն իր հետ տարաւ. ճօթեղին, դեղօրայք, կարի մեքենաներ և այլ անհրաժեշտ իրեր։ Բայց ճանապարհին, Մանազկերտի մօտերը, հանդիպելով ուսւական զօրքի նահանջին, արշաւախուսը ստիպված եղաւ վերադառնալ Իգդիրի գրայով էջմիածնին, և Մանազկերտի համար իր տարած 24 հակ իրերից կարողացաւ աղատել կորստից միայն 18-ը և բերել բաժանել Երևանում փախստականներին։ Արշաւախուսը անդամները գնացին Քանաքեռ, Ներքին-Սխտա և այդտեղ օգնութիւն ցոյց տուին փախստականներին. իսկ յետոյ Գր. Վարդանեանը լիազօրի պաշտօնով անցաւ Ղարաբլիսէ,

Արծափ, վերջում մնաց Խօյում, Սալմաստում, Վահում
և գնեց անասուն ու սերմացու փախստականների համար՝
թէ Նպաստամատոյցի և թէ Միութեան միջոցներով:

3) Բացել է երկու որբանոց, առաջինը Թիֆլիսում
120 որբերի համար 1915 թ. սեպտեմբեր ամսից, երկ-
րորդը՝ Թիֆլիսի նահ. Գօրու գաւ. Քարէլի գիւղում՝ 100
որբերի համար 1916 թ. օգոստոս ամսից:

4) Նպաստել է Թիֆլիսում տ. Ս. Վ. Արդութեան-
Երկայնաբազուկի բացած ապաստարան-դպրոցին.

5) Նպաստել է Գոյիանեան դպրոցի բակում բացված
փախստական երեխանների ճաշարանին.

6) Նպաստել է մի քանի փախստական երեխանների
ուսման գործին.

7) Բացել է Ալաշկերտի գաւառի Բայազէտ քաղա-
քում և Արծափ գիւղում երկսեռ երեխանների համար
դպրոցներ, ինչպէս նաև Ընկերութեան երկու որբանոց-
ներում:

8) Նպաստել է Հայ Աղգագրական Ընկերութեան
միջոցով աշխատանք հայթայթելու թիւքահայ ինտելի-
գենտ մտաւորականներին, հաւաքելով վերջիններիս ձեռ-
քով ազգագրական նիւթեր փախստականների մէջ:

9) Միջնորդութիւններ է յարուցել կովկասեան ռազ-
մաբեմի փախստականների գործերը անօրինող գիխաւոր
լիազօր գեներալ Վ. Մ. Թամաշշեանի, պատերազմից վնաս-
վածներին օգնող Կ. Գլխաւոր Կօմիտէտի և Մեծ Իշխանութիւ-
նատիաննա Նիկոլայեմայի անուան Կօմիտէտի, ինչպէս նաև
Համառուսական Քաղաքների Միութեան առաջ փախըս-
տականներին օգնելու հարցերի վերաբերմամբ: Այդ միջ-
նորդութիւնների հետևանքն եղաւ այն, որ ա) Վարչու-
թիւնը ստացաւ կովկասեան Գլխաւոր Կօմիտէտից 15000
ը. թիւքահայ փախստական արհեստաւորներին աշխա-
տանք ստեղծելու համար, որպիսի նպաստակով բացվեցին

ոսկերիչների, ոսկեղօծների, կօշկակարների, ատաղձա-
գործերի արհեստանոցներ, յատուկ մասնաժողովի ղեկա-
վարութեամբ, որոնց շնորհիւ շատ արհեստաւորներ
կարողանում են ապրել իրանց ընտանիքներով սե-
փական աշխատանքով. բ) ուղարկել տուեց Դիագինի
շրջանի հայ գաղթականների համար 1000 վեր-
մակ, 2400 ներքնակ, 2400 բարձի երես, 1000
ձեռք կանացի, 500 ձեռք տղամարդու և 250 ձեռք
երեխանների շորեր. զ) ստացաւ Համառուս Քաղաքների
Միութեան կովկասեան գլխաւոր լիազօր Ալ. Խատիսեանի
կարգադրութեամբ, Միութեան Թիֆլիսի պահեստից, ինչ-
պէս և զանազան անհասներից, թէ Թիֆլիսում և թէ
զբուհ զգեստներ ու սպիտակեղէն, վերմակներ, չաւտեր
և այդ ամենը բաժանեց փախստականներին՝ մի մասը Թիֆ-
լիսում, իսկ մի մասը ուղարկելով գաւառները առանձին
մարդկանց ձեռքով. զ) ստացաւ փախստականներին օգ-
նող քաղաքային յանձնաժողովի նախագահ Հ. Առաքելեա-
նի կարգադրութեամբ Մարութալօյի քաղ. մասնաժողո-
վի բայցած ապաստարանի իրերից մի մասը, օրի-
նակ նատարաններ, սեղաններ, պահարաններ, կաթսաներ,
հեռախօս, Ընկերութեանս 1-ին որբանոցի համար, հայն:

10) Պատրաստել է գեներալ Թամամշեանի յանձնարա-
րութեամբ փախստականների համար տաք հագուստեղէն
72, 785 բուրլի գումարի, և յանձնել նրան չ000 վերմակ,
1925 կիսավերաբերու, 2130 տղամարդու բլուզ, 2150 ե-
րեխանների բլուզ, 2050 տղամարդկանց շապիկ, 2490 ե-
րեխանների շապիկ, 2190 տղ. ներքնավարտիկ, 2000 երեխ.
ներքնավարտիկ, 2000 տղ. վարտիկ, 2000 երեխանների
վարտիկ, 2165 կանացի կօֆտա, 2000 կանացի շապիկ,
2000 զօշակի երես, 2050 բարձի երես՝ մեծ, 2000 բարձի
երես՝ փոքր, 4005 գուլպա տղամարդկանց և կանացի
495 երեխ. գուլպա, ընդամենը 35, 370 կտոր, որոնց

գեն. Թամամշեանը Քաղ. Միութեան միջոցով ուղարկեց փախստականներին բաժանելու համար գաւառները:

11) Մասնակցել է Հայաստանի Վերաշնութեան Յանձնաժողովի հետ միասին այն մեծ ձեռնարկութեան, որի կատարումը ուղարկութեան կողմից՝ յանձին գեներալ Թամամշեանի, յանձնից հայկան երեք ընկերութիւնների Միութեան, նախագահութեամբ Թիֆլիսի թեմական առաջնորդի (Միութիւնը բարկանում է՝ Կ. Հ. Բ. Ընկ. և նրան կից կենդրօնական Կոմիտէտից, Հայ Նպաստամատոյց Ընկ. և նրան կից Հայաստանի Վերաշնութեան Յանձնաժողովից, Հ. Գիւղանտնական Ընկ. և նրան կից գիւղանտնական յանձնաժողովից), Յիշեալ ձեռնարկութիւնն էր—հայթայթել Վասպուրականի շրջանի հայ փախստական ազգաբնակութեանը սերմացու, լծկան ու կթան անասուն և երկրագործական գործիքներ: Այդ Նպաստակին յատկացրված գումարներից Նպաստամատոյց Ընկերութիւնը ստացաւ իր բաժինը երկու նուագով՝ 180,000 լ. և գործադրեց իր լիազօրներ Ստ. Մալխասեանի, Գ. Վարդանեանի, Մ. Մինասեանի և Վարազեանի ձեռքով և ապա մանրամատն հաշիւը ներկայացրեց գեներալ Թամամշեանին՝ Միութեան միջոցով:

12) Ունեցել է իր լիազօրը Վանի շրջանում (ներկայումս քաղաքացիութիւն թէրզիբաշեան) և նպաստել է Վանի այգիների, առուների, պարտէզների վերաշնութեանը, որի համար հարկաւոր գումարները տրվել են Հայաստանի Վերաշնութեան Յանձնաժողովի կողմից, իբրև այդ գործի ղեկավարի և Վանի միլիցիան պահպանողի:

13) Ուղարկել է Վան Ռ. Լուսինեանին՝ դարբնոցի երերով, թէկ այդ արհեստանոցը անկարելի եղաւ բանակարչութիւնից անկախ պատճառներով և դնված իրերը վերցրեց յետոյ Միութիւնը:

14) Բացել է 1916 թ. ղեկամբերի վերջերից էրզ-

բումի մէջ Յ-ըդ որբանոց 80 երեխաների համար, 50-ը պարօֆ. Թումայեանի Լօնդօնի Հայ Որբապահ Կոմիտէտ» անունով, իսկ 30-ը՝ Լօնդօնաբնակ հայազգի եղբ. Յակուեանների հայր տէր-Պսակ քահանայի անունով: Սկզբում ախաղծված էր էրզրումի որբանոցը, հասածայն Լօնդօնի Որբապահ Կոմիտէտի ցանկութեան, բանալ գիւղատնտես. սդարակով հանդերձ Վան քաղաքում, սակայն Վանի շըրանի անապահով գրութիւնն արգելք եղաւ դրան:

15) Տուել է փոխարինաբար Հայաստանի Վերաշնութեան Յանձնաժողովին 12,489 լ. 02 կ. որա գործուծունէութեանը աջակցելու համար:

16) Ուղարկել է յատուկ լիազօր՝ Մ. Մելքոնմեանին Զուլֆա՝ հայ փախստականների ներգաղթին դէպի Վան օժանդակելու Նպաստակով: Կարճ ժամանակամիջոցում սահմանից անցնողների մօտ 6000 հոգի աջակցութիւն և դիւրութիւն ստացան Նպաստամատոյցի լիազօրի օգութեամբ:

17) Նպաստել է Պարսկաստանում Խօյի, Սուլտայի Բարանդուղի քիւրդախօս ու թիւրքախօս հայ գիւղերին, ստկացնելով 1500 լ., ինչպէս և օգնել է պարսկահայ փախստականների գիւղատնական կարիքներին, յատկացնելով 5000 ըուբլի, փոխազրելով երկու գումարն էլ Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսէս եպ. Մելքոններին:

18) Ընտրել է Նպաստամատոյցի կողմ, ց պ. Միրական Տէր-Մարտիրոսեանին այն մասնաժողովի մէջ, որ աժաննելու է գեներալ Թամամշեանի յատկացրած (Էջեանի եղբ. Օգն. Յանձնաժողովի, Կ. Հ. Բ. Ընկ. և պաստամատոյցի անունով) 300000 լ. կառավարական զամատը թիւրքահայ վաճառականների և արհեստաւորերի միջև փոխարինութեան ձեռք, ըստ որում յիշեալ առնաժողովը գործում է Երևանում՝ Խորէն եպիսկոպոսի նախադատութեամբ:

19) Պատրաստել և ուղարկել է Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայէմիայի Կօմիտատին մի նախահաշիւ Երեանում, Մեծ Իշխանուհի անունով «Աշխատանքի Ֆուն» հիմնելու մասին՝ փախստականներին աշխատանք հոյթայթելու համար, ինդըրելով վերոյիշեալ Կօմիտէտից յառկացնել Նպաստամատոյցին 150—200 հազար բուրլի փոխարինաբար:

20) Քննել է իր նիստերից մէկում հայկական կազմակերպութիւնների մշտական Միութեան կանոնագրութեան նախագիծը և հաւանութիւն տուել դրան, ինչպէս և Նուբար-փաշայի առաջարկութիւնը՝ աշխատել կայացնելու ազգային համերաշխութիւն հայկական հարցի վերաբերմամբ, յայտարարելով Նպաստամատոյցի պատրաստակամութիւնը ըստ ամենայնի կողմնակից լինելու այդ համերաշխութեանը:

Սրանք են եղել Նպաստամատոյց Ընկերութեան գործունէութեան դիմաւոր կէտերը 1915 և 1916 թ.թ., Ու, չը նայած որ միայն երկու տարի գոյութիւն ունի Նպաստամատոյց Ընկերութիւնը, սակայն նա, կարողացաւ իր պատրաստոր տեղը գրաւել հայկական դորձող կազմակերպութիւնների ու մարտինների շարքում և իր ձայնը լսելու անել տալ թէ հայ հասարակութեան և թէ պետական իշխանութեան առաջ:

ՀԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՐԹԱՑՈՅՆԵՐԸ

Ընկերութեան Առաջին որբանոցը բացված է 1915 թ. սեպտեմբերի սկզբից Խթիսում (Օլդինսկայա փողոց № 86, տուն եղբ. Զիլինգարեանների): Առաջին տարին շինութիւնը ձրի տրվեց որբանոցի համար, որի պատճառով Ընկերութիւնս անկեղծ շնորհակալութիւն է յայտնում եղբ. Զիլինգարեաններին, իսկ 1916 թ. սեպտեմբերից սկսած նշանակված է վարձ, ամսական 120 ր.:

Որբանոցում պատսպարված երեխանների միջին թիւ է 120: Սակայն ի նկատի ունենալով, որ այսքան թւով երեխանների համար շինութիւնը նեղ է զալիս և չունի ընդարձակ բակ խաղերի և զրուանքի համար՝ որոշվեց տո այժմ երեխանների թիւը 10-ով նուազեցնել, իսկ 1917 թ. սեպտեմբերի համար նոր շինութիւն փնտրել, աւելի ընդարձակ բակով և աւելի պատ:

Երկրորդ որբանոցը բացված է 1916 թ. օգոստոսից Քարելի կայարանում (Թիֆլիս-Բաթում գծի վրա, Բագրատիոն-Մուխրանսկու տանը), տարեկան 1500 լ. վարձով: Շինութիւնը յարմար է և ունի ընդարձակ բակ: Այստեղ պատսպարվում են միջին թւով 100 երեխայ:

Առաջին որբանոցի վրա 16 ամսվայ ընթացքում (1915 սեպտ.— 1916 գեկտ.) ծախս է եղել ընդամենը 36457 ր. 19 կ., սրա մէջ հաշվելով և սկզբնական կահաւորութիւնը, ինչպէս նաև շինութեան բէմօնան ու օժանդակ նոր շինուածքները 2000 ր. արժողութեամբ:

Երկրորդ որբանոցի վրա հինգ ամսվայ ընթացքում (1916 օգոստոս—դեկտեմբեր) ծախս է եղել ընդամենը 23,988 ր. 67 կ. կ. մէջը հաշվելով սկզբնական կահառը բութիւնը, շինութեան բէմօնտն ու օժանդակ նոր շինվածքները:

Որբանոցներում առողջական դրութիւնը գոհացուցիչ է: Առաջին որբանոցը պարբերաբար յաճախում է յատուկ բժիշկ, շաբաթը գոնէ մի անգամ: Մասնագիտական խնամք պահանջող հիւանդներին, ինչպէս աչքի, կոկորդի, կաշու և այլն, ձրիաբար բժշկական օգնութիւն են մատուցել բժիշկներ պ. պ. Գէորգը էղեան, Տէր-Դաւթեան, Մզառլէլեան, որոնց խորին շնորհակալութիւն է յայտնում Վարչութիւնս, ինչպէս և Սրամեան հիւանդանոցի յարգելի տնօրէն-բժիշկ պ. Ա. Յարութիւնեանին, որ պատրաստակամութեամբ ընդունել է որբանոցի՝ երկարատև բժշկութիւն պահանջող հիւանդ երեխաներին: Երկրորդ որբանոցը յատուկ բժիշկ չունի, այլ բժշկական հսկողութիւնը յանձնված է ֆէլզէրի: Լուրջ հիւանդութիւնների գէպքում հիւանդ երեխաները բերվում են թիֆլիս և զետեղվում հիւանդանոցում: Երկու որբանոցում էլ (ինչպէս առհասարակ բոլոր որբանոցներում) շատ տարածված էին կաշու հիւանդութիւնները (քոր, քոս), որոնք չեն կաշու հիւանդութիւնները (գեղեր, անպայման մաքրութիւն, կզզիացում) դեռ հնարաւոր չէ եղել արմատախիլ անել, գուցէ այս պատճառով, որ երեխաները, ամաշելով հիւանդութիւնից՝ աշխատում են վերահսկողներից թաքցնել, իսկ երբ նրանց հիւանդութիւնը յայտնի է դառնում ուրիշները նրանցից արդէն վարակված են լինում:

Ուսումը առաջին որբանոցում սկսվել է 1915 թւի վերջերից և տարվում էր մի ուսուցչի ձեռքով, թեթե ծրագրով, առանց ուսուերէնի: Իսկ 1916 թ-ի սեպտեմ-

բերից երկու որբանոցում էլ մացրվեց կանոնաւոր ուսում գաղթականական դպրոցների խորհրդի մշակած ծրագրով: Իւրաքանչիւր որբանոցում դպրոցական հասակի երեխաները բաժանված են երեք դասակարգի (տղայ, աղջիկ, և խառն), և իւրաքանչիւր դպրոցում ուսման գործը տանում են երեքական ուսուցիչ կամ ուսուցչունի:

Առաջին որբանոցի երեխաներից եօթը մեծ տղաներ յաճախում են արհեստանոցներ (կօշկակար, գերձակ, տպարանի զրաշար). մէկը արդէն զուրս է եկել որբանոցից և ապրում է իր սեփական աշխատանքով: Երկրորդ որբանոցում երեխաների մեծ մասը պարապում են զամբիւղագործութեամբ ու կողովագործութեամբ, որբանոցի բիւղագործութեամբ ու կողովագործութեամբ, որբանոցի բէնքին կից՝ կովկասեան Տնայնագործական Կօմիտէտի բացած արհեստանոցում:

Կերակուրը երկու որբանոցում էլ պարզ, բայց առողջաբար է և սննդարար, որի ապացուցն է երեխաների զգալի ֆիզիքական զարգացումը, առողջ ու կայտառ տեսքը:

Զգացվում է կարիք չափահասութեան մօտ տղաներին և աղջիկներին որոշել միմեանցից: Այս մասին ընկ. Վարչութիւնս հարց էր յարուցել կենտր. Հ Կօմիտէտի որբանոցների կառավարութեան խորհրդի մէջ, և որոշվել էր զատ-զատ որբանոցներում տեղաւորել բոլոր որբանոցներից որոշելով, չափահաս տղաներին առանձին, չափահաս աղջիկներին առանձին, իսկ փոքրահասակներին առանձին: Աակայն այս որոշումը մինչև այսօր չիրականացաւ:

1-ին որբանոցը այցելել են 1915 և 1916 թ. թ. կոմսունի Ելիզավէտա Անդրէեվսա Վորօնցովա-Դաշկօվան, Կարմիր-Խաչի լինգով ի. դ. խ. Գոլուբեկ, սենատորներ Զալլին և Զէրբշեով և այլն:

1-ին որբանոցի կառավարիչն է պ. Ստ. Մալխա-
սեան (1916 թ. Մալխասեանի բացակայութեան ժամա-
նակ նշան պարտականութիւնները կատ սրել է երեք ամսով
ոլ. Ա. Նազարէթեան) իսկ 2-րդ որբանոցի ինաւակալու-
հու աղաջոնը սիրայօժար անվարձ կատարում է ո.
իւլիս Սպէնդիարեան:

1916 թ. գեկտ. 15-ից Վարչութիւնը բացեց Բնկ.
3-րդ որբանոցը 80 երեխաներով՝ երգում քաղաքում:

Ընկերութեան Արհեստանոցները

Ընկերութեան Վարչութիւնս, նկատելով, որ շատ
թիւրքահայ գաղթական արհեստաւորներ Թիֆլիսում պա-
րապ են մնում, չունենալով ոչ գրամագլուխ և ոչ այլ
յարմարութիւններ արհեստանոցներ բանալու և իրանց
ձեռքի աշխատանքով ապրելու համար, 1915 թ. գեկտեմ-
բերին վկանեց գաղթականական գործերի Կովկասեան Գրլ-
իաւոր Կօմիտէտին, ինպես նպաստ գաղթականների
համար արհեստանոցներ բանալու։ Վարչութեանս դի-
մումը յարգվեց, և Գլխաւոր Կօմիտէտը 1916 թ. սկզբին
Ընկերութեանս տրամադրութեան տակ դրեց այդ նպա-
տակով 15000 ըուբի, այն պայմանով, որ այս գումարի
գոնէ կէսը ապագայում վերադարձնվի Կօմիտէտին։

Այս գրամական օժանդակութեան շնորհիւ Վարչու-
թիւնս, յատուկ հիմնված արհեստանոցների մասնաժողո-
վի միջոցով, բացեց մի շարք արհեստանոցներ, այսինքն՝

Առաղձագործների,	9	մարդով
-----------------	---	---	---	---	---	--------

Կօշկակարների,	17	»
---------------	---	---	---	---	----	---

Ոսկերիչների,	:	.	.	.	24	»
--------------	---	---	---	---	----	---

Ոսկեզօծողների,	4	»
----------------	---	---	---	---	---	---

Կահագործների,	2	»
---------------	---	---	---	---	---	---

Բացի սրանից՝ առանձին տաճկահայ գաղթական գեր-
ձակների, ինչպէս և սափրիչի տուեց գրամական նպաստ-
ներ՝ խանութներ բանալու համար։

Որովհետև սոկերիչ արհեստաւորները բազմաթիւ էին և նրանց աշխատանքի ատաղձը, այսինքն արծաթը թաղ-կարժէք նիւթ է, որի համար աւելի մեծ դրամագլուխ էր պահանջվում, ուստի արհեստաւորական մասնաժողովը յարմար համարեց միանալ Կովկ. Բարեգործական Ընկերութեանը կից կազմված՝ արհեստաւորական մասնաժողովը հետև և միասին, հաւասար դրամագլուխով, բանալ ոսկերչանոցները, երկու Ընկերութիւնների անունով։

Թիֆլիսի Ակումբը (Սօբրան) ատաղձագործական, կօշկակարական և ոսկերչական արհեստանոցների համար ժամանակաւորապէս ձրիապէս տուեց իր տունը Գրիգորովովսկայա փողոցի վրա № 33, որի համար Ընկերութեանս Վարչութիւնը խորին շնորհակալութիւն է յայտնում յիշեալ Ակումբի Աւագների Խորհրդին։

Ի միջի ալլոց, ատաղձագործները պատրաստել են պետական պաշտպանութեան գործի համար զինուրական թամբերի փայտէ մասերը, Բացի այդ՝ արհեստանոցներում արտադրված իրերը վաճառվել են շուկայի գներից պակաս գներով։

Դուիիրված զգեստներ

1915 և 1916 թ. թ. Վարչութիւնը ստացել է յօգուտ Ընկերութեան որբանոցների, ինչպէս նաև փախստական ընտանիքներին Թիֆլիսում բաժանելու և գաւառն ուղարկելու համար զանազան հագուստեղէն՝ որոնց նուիրատունների ցանկը բերվում է ստորև։

Պետրօգրատլից, օր. Արաքսիա Տիգր. Գեղամեանից երկու անդամ երկու փոքր կապոց սպիտակեղէն փախստականների երեխանների համար «Մշակի» հասցէով։

Քաղաքների Միութեան Կովկ. լիազօր Ալ. Խատիսեանի կարգադրութեամբ, Միութեան Թիֆլիսի պահեստից 2 արկղ, մինը մեծ, միւսը փոքր՝ կանանց և տղամարդկանց զանազան շապիկներ, շալեր, ֆուֆոյկաներ, շարֆեր և երեխանների վերարկուներ։

Պետրօգրատլից, Ալահվերդեանի խանութից (Հ. Առաքելեանի անունով) երեք կապոց շորեր։
Խարկովի նահ. Սումմից, Փիլիպոս Ալահվերդեանի միջոցով 2 հակ զանազան շորեր։

Զաքալթալսիլից, Կախիսի աւանից Ե. Մինասեանից մի փոքրիկ կապոց շորեր երեխանների համար, «Հորիզոնի» գրասենեակի միջոցով։

Թախտարազարից, Կ. Օրդեանից երեք կապոցով 60 զոյգ գուլպա և 60 զոյգ ձեռնոց, որ հայ գաղութի խընդանօք Վարչութիւնս յանձնեց Անդրանիկի խմբի կամաւորներին՝ Ազգային Բիւրոյի միջոցով։

Թիֆլիսում, տ. Յարութիւնեանից 2 երկաթէ մահճակալ
մատրասներով, բարձերով ու զերմակներով, տ. Ասիտ-
եանի միջոցով։

Թիֆլիսում, Վասակ Փիլիպոսեանից 3 թոփ միտկաւ։
Դուդառտահց, հինգ ծանրոց հագուստ՝ Թիֆլիսի Հայկ-
կենդր. Կօմիտէտի միջոցով։

Փախստականների դործերը տնօրինող զլիսաւոր լիա-
զօր զիներալ Թատիամշեանից մի արկղ զանազան իրեր՝
Մեծ Լշիանուհի Տատիանա Նիկոլայէմսայի Կօմիտէտի
տեղական պահեստից։

Դուդովիայից, Թ. Մարգարեանից 2 կտակոց շորեղէն։
Սամարայից, հայ կանանց կօմիտէտից (Հ. Առաքե-
լեանի անունով) 235 հատ սպիտակեղէն երեխանների, կտ-
նանց համար և ուրիշ զանազան հագուստեղէն, որոնք
յանձնվեցին Անդրանիկին՝ Ալէքսանդրօպոլի շրջանում
ապաստանած սասունցիների ընտանիքներին բաժանելու։

Վարչութիւնս, թէն պարբերաբար չէ զլացել իր
շնորհակալութիւնը յայտնել մամուլի միջոցով թէ դրամ
թէ զգեստ նուիրաբերոցներին, այժմս ևս իր բարոյական
պարտականութիւնն է համարում արտայայտել բոլոր
նուիրատուններին իր անկեղծ շնորհակալութիւնը։

Հ Ա Շ Ի Բ

Հ Ա Յ Ն Ա Ս Ա Մ Ա Խ Ո Ւ Ո Յ
Ընկերութեան

1915 իւ 1916 թ. թ.

Բնդիանուր մուտք

Մուտքի յօդուածներ	1915 թ.		1916 թ.	
	Բուռ.	Կ.	Բուռ.	Կ.
ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ				
1) Մշտական՝ Թիֆլիսում և Պրսից 33 հոգի.	3300	—	—	—
2) Տարեկան՝ Թիֆլիսում և Պրսից (1915 թ. 106 հոդի, 1916 թ. 27 հ.).	318	81	—	—
ՆՈՒՔՆԵՐ				
1) Բնդիանուր՝ Թիֆլիսում և Պրսից անմիջապէս և մամուլի օր- դանների միջոցով.	37698 49	4567 07	—	—
2) Յօդուածոքերի կամ որբանոց- ների՝ Թիֆլիսում և Պրսից—ան- միջապէս և մամուլի օրդ. միջ.	3406	12731	—	—
ԳՐՔԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ				
1) «Ղեղնդ Երէց», 2) «Արմենիա», 3) «Գեղունի» և այլ զրքեր, 4) «Զի- թենի», — Թիֆլիսում և Պրսից. ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ տուփերով ԴԱՍԱՀԱՍՈՒԹԻՒՆ.	1659 90	7832 05	—	—
ՀԱՄԵՍԱՆՈՑՆԵՐ ՀԱՄԵՐԴ.	6229 23	—	—	—
ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՀԱՆԱԳԱՅԻՆ ԵՒ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ.	137 80	—	—	—
ՊՈԲԱՆՈՑՆԵՐ	1761 03	—	—	—
3489 75	—	—	—	—
